ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/52 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
11	-	-	Սարքը նախատեսված պետք է լինի բարձր մաքրության թորած ջուր ստանալու համար՝ լաբորատոր և բժշկական նպատակներով: Այն պետք է լինի լիովին ավտոմատացված, ունենա ներկառուցված ջրի կուտակման տարողություն և էներգախնայող համակարգ: Նյութեր՝ ջրի և գոլորշու հետ շփվող բոլոր դետալները (ներառյալ թորման խցիկը, պահեստային բաքը, խողովակները) և ջեռուցման տարրերը (տաքացուցիչ) պետք է պատրաստված լինեն AISI 304 L (կամ համարժեք) տիպի չժանգոտվող պողպատից՝ կոռոզիակայունությունն ապահովելու համար: Սարքի արտաքին պատյանը պետք է պատրաստված լինի ցինկապատ պողպատից՝ պատված էլեկտրաստատիկ փոշեներկմամբ՝ արտաքին ազդեցություններից պաշտպանելու համար: Սառեցնող համակարգը պետք է տեղադրված լինի պահեստային բաքի վերին հատվածում (ներսում)՝ ապահովելով կոմպակտություն և ջերմափոխանակման արդյունավետություն: Գազազրկում՝ Սարքի վերին հատվածում պետք է առկա լինի հատուկ գազանցք՝ ածխաթթու գազի (CO2) հեռացման համար: Սպասարկման

			հարմարավետություն՝ պահեստային բաքը և թորման խցիկը պետք է ունենան հեշտ բացվող/բարձրացվող կափարիչներ՝ ներքին մակերեսները հեշտությամբ մաքրելու և սպասարկելու համար։ Թորած ջրի դուրսբերման համար սարքը պետք է հագեցած լինի հարմարավետ փականով ծորակով։ Սարքը պետք է ունենա ինչպես պատից կախելու, այնպես էլ սեղանի վրա տեղադրելու հնարավորություն։ Այդ նպատակով այն պետք է համալրված լինի հատուկ կախիչներով (ամրացման բռնակներով) և հարթ մակերեսի վրա կայունությունն ապահովող սիլիկոնե ոտքերով։ Ավտոմատ կառավարում՝ պահեստային բաքը ամբողջությամբ լցվելու դեպքում սարքը պետք է ավտոմատ անջատվի (ներառյալ ջրի մուտքը)՝ ջրի և էլեկտրաէներգիայի ավելորդ ծախսից խուսափելու համար։ Պահեստային բաքից ջուր վերցնելիս (երբ մակարդակը իջնում է), սարքը պետք է ավտոմատ վերսկսի աշխատանքը։ Անվտանգություն՝ թորման խցիկում ջրի անբավարար մակարդակի կամ գերլցման դեպքում պետք է գործի վթարային անջատման ավտոմատ համակարգ։ Ջրամատակարարման վերականգնման կամ ցուցանիշների նորմալացման դեպքում սարքը պետք է ինքնուրույն վերադառնա աշխատանքային ռեժիմի։ Թորման արտադրողականություն՝ 4±0,5 լիտր/ժամ Արտադրված ջրի էլեկտրահաղորդականություն՝ 2.3 (±0.5 թույլատրելի շեղումով) մկՍմ/սմ, 25°C ջերմաստիճանում Ներկառուցված պահեստային բաքի ծավալ 8±0,5 լիտր Սառեցման ջրի ծախս ոչ ավել, քան 45±3 լիտր/ժամ Էլեկտրական հզորություն 3.0 կՎտ (± 10% թույլատրելի շեղումով) Էլեկտրասնուցում՝ 220-230 Վ, 50-60 Հց, միաֆազ։ Սարքը պետք է մատակարարվի տեղադրման և միացման համար անհրաժեշտ բոլոր դետալներով (խողովակներ, միացման պարագաներ և այլն), ինչպես նաև իրականացվի տեղադրման աշխատանքները։ Առնվազն 1 տարվա երաշխիք։ Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, փաթեթը չվնասված և ապահովված համապատասխան պահպանման պայմաններով մատակարարման ամբողջ ընթացքում։ Մատակարարումը՝ մասնակցի կողմից։ Մատակարարումից

			առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ЭКСТРА МОТОРС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/52 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
11			